

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2009 թվականի դեկտեմբերի 11)

*(2010 թվականի մայիսի 21-ի արձանագրության խմբագրությամբ)*

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության (այսուհետ՝ Մաքսային միություն) անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմերը,

Մաքսային միություն ձեւավորելու նպատակով,

հիմնվելով «Տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի վրա,

ընդունելով անասնաբուժության ոլորտում միասնական քաղաքականության իրականացման նպատակահարմարությունը,

հաշվի առնելով Միջազգային կենդանահամաճարակային բյուրոյի Ցամաքային կենդանիների եւ Ջրային կենդանիների սանիտարական օրենսգրքերի կանոններն ու սկզբունքները, ինչպես նաեւ «Անասնաբուժության ոլորտում համագործակցության մասին» ԱՊՀ երկրների անդամ պետությունների 1993 թվականի մարտի 12-ի համաձայնագիրը, «Առետրում տեխնիկական արգելքների մասին» համաձայնագիրը եւ «Առետրի համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների կիրառման մասին» համաձայնագիրը, որը ընդունվել է Մարաքեշում, 1994 թվականի ապրիլի 15-ի Առետրի բազմակողմ բանակցությունների Ուրուգվայի փուլի արդյունքներով,

նպատակ ունենալով պաշտպանել Մաքսային միության մաքսային տարածքը կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցիչների ներթափանցումից եւ տարածումից, այդ թվում այն հարուցիչների, որոնք ընդհանուր են մարդու եւ կենդանիների,

եւ անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներին  
չհամապատասխանող ապրանքների (արտադրանքի) համար,

համաձայնեցին հետեւյալի մասին.

### **Հոդված 1**

Սույն Համաձայնագրում օգտագործվում են հետեւյալ հասկացությունները.

«անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն)» նշանակում է լիազոր մարմինների գործունեությունը, որն ուղղված է կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցիչների, այդ թվում մարդու եւ կենդանիների, եւ անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներին չհամապատասխանող ապրանքների (արտադրանքի) ներթափանցման եւ տարածման կանխմանը, ինչպես նաեւ անասնաբուժության ոլորտում Կողմ պետությունների օրենսդրության եւ Մաքսային միության օրենսդրության խախտումների կանխմանը, հայտնաբերմանը եւ կանխարգելմանը:

«անասնաբուժասանիտարական միջոցներ» նշանակում է կատարման համար պարտադիր այն պահանջներն ու ընթացակարգերը, որոնք կիրառվում են կենդանիների հիվանդությունները կանխելու եւ մարդու եւ կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների առաջացման ռիսկերից բնակչությանը պաշտպանելու նպատակով, այդ թվում կենդանիների, կենդանական կերի, կենդանական ծագում ունեցող հումքի եւ արտադրանքի, ինչպես նաեւ Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններում դրանք փոխադրող փոխադրամիջոցների միջոցով այդ հիվանդությունների ներբերման ու տարածման դեպքերում

«լիազոր մարմիններ» նշանակում է Կողմ պետությունների պետական մարմիններն ու հաստատությունները, որոնք գործունեություն են իրականացնում անասնաբուժության ոլորտում:

Սույն Համաձայնագրում հատուկ չսահմանված հասկացությունները կիրառվում են մաքսային միության շրջանակներում կնքված այլ միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

## Հոդված 2

Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների (արտադրանքի) վրա, ներառյալ անձնական օգտագործման ապրանքները, (այսուհետ՝ հսկողության ենթակա ապրանքներ), որոնք տեղաշարժվում են Մաքսային միության մաքսային սահմանով եւ մաքսային միության մաքսային տարածքում եւ ընդգրկված են անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա Ապրանքների միասնական ցանկում (այսուհետ՝ Միասնական ցանկ):

Հսկողության ենթակա ապրանքները պետք է համապատասխանեն անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին առաջադրվող Միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներին եւ դրանց նկատմամբ պետք է իրականացվի պարտադիր անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն)՝ համաձայն Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողության իրականացման միասնական կարգի մասին Կանոնակարգի (այսուհետ՝ «Հսկողության միասնական կարգի մասին» Կանոնակարգ):

## Հոդված 3

Լիազոր մարմինները իրականացնում են անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն) Մաքսային միության մաքսային սահմանով հսկողության ենթակա ապրանքների տեղաշարժման ժամանակ, Կողմ պետությունների պետական սահմաններում տեղակայված անցակետերում կամ Կողմ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ տեղերում (այսուհետ՝ անցակետեր), որոնք կողմ պետությունների օրենսդրության համաձայն զինվում եւ ապահովվում են անասնաբուժական հսկողության միջոցներով:

## Հոդված 4

1. Հսկողության ենթակա ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակ Մաքսային միության մաքսային տարածք է ներկրվում Միասնական անասնաբուժական պահանջներին համապատասխան եւ, եթե առկա է թույլտվություն՝ տրված այն լիազոր մարմնի կողմից, որի պետության տարածք են ներկրվում նշված ապրանքները, համաձայն «Հսկողության

միասնական կարգի մասին» Կանոնակարգի եւ (կամ) անասնաբուժական հավաստագրի, որը տրամադրվել է նշված ապրանքը ուղարկող պետության իրավասու մարմնի կողմից:

*(2010 թվականի մայիսի 21-ի արձանագրության խմբագրությամբ)*

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 607 որոշմամբ հաստատվում են Երրորդ երկրներից Մաքսային միության մաքսային տարածք ներկրվող՝ հսկողության ենթակա ապրանքների համար տրամադրվող Միասնական անասնաբուժական հավաստագրերի ձեւաչափերը:

Միասնական անասնաբուժական պահանջների հիման վրա լիազոր մարմինները կարող են Մաքսային միության մաքսային տարածք ներկրվող եւ Միասնական ցանկում ընդգրկված՝ հսկողության ենթակա ապրանքների համար տրամադրվող անասնաբուժական հավաստագրերի նմուշները երկկողմանի կարգով համաձայնեցնել ուղարկող երկրի (երրորդ կողմ հանդիսացող երկրի) իրավասու մարմինների հետ: Նշված անասնաբուժական հավաստագրերի նմուշները ուղարկվում են Մաքսային միության հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) դրանք անցակետերին փոխանցելու համար:

Հսկողության ենթակա այն ապրանքները, որոնց նկատմամբ սահմանվել է մաքսային տարանցիկ ընթացակարգ, փոխադրվում են Մաքսային միության մաքսային տարածքով «հսկողության միասնական կարգի մասին» կանոնակարգին համապատասխան:

2. Հսկողության ենթակա ապրանքները Կողմերից մեկի պետության տարածքից տեղափոխվում են մյուս Կողմի պետության տարածք Միասնական անասնաբուժական պահանջներին համապատասխան եւ ուղեկցվում են անասնաբուժական հավաստագրերով:

Կողմերը փոխադարձաբար ճանաչում են Հանձնաժողովի հաստատած միասնական ձեւաչափերով լիազոր մարմինների կողմից՝ տրամադրված անասնաբուժական հավաստագրերը:

## **Հոդված 5**

1. Միասնական անասնաբուժական պահանջների հիման վրա՝ լիազոր մարմինները միջոցներ են ձեռնարկում արգելելու Մաքսային միության մաքսային տարածք կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցիչների, այդ թվում մարդու եւ կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հարուցիչների եւ անասնաբուժասանիտարական առումով

վտանգ ներկայացնող կենդանական ծագում ունեցող ապրանքների (արտադրանքի) ներկրումն ու տարածումը:

## 2. Լիազոր մարմինները.

իրենց պետության տարածքում կենդանիների վարակիչ հիվանդությունների, այդ թվում մարդու եւ կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների եւ անասնաբուժասանիտարական առումով վտանգ ներկայացնող կենդանական ծագում ունեցող ապրանքների (արտադրանքի) առկայությունը եւ տարածումը հայտնաբերելու դեպքում՝ ախտորոշման պաշտոնական սահմանումից կամ ապրանքների (արտադրանքի) անվտանգ չլինելը հաստատվելուց անմիջապես հետո, դրանց, ինչպես նաեւ դրանց նկատմամբ ընդունված անասնաբուժական միջոցների մասին տեղեկությունները ուղարկում են ԵվրԱզԷՍ-ի տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների ոլորտի Տեղեկատվական համակարգ եւ Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեստրի ինտեգրված տեղեկատվական համակարգ,

ժամանակին տեղեկացնում են Հանձնաժողովին Կողմ պետության կենդանիների համար վտանգավոր եւ կարանտինային հիվանդությունների ցանկում տեղի ունեցած փոփոխությունների մասին,

անասնաբուժության ոլորտում ցուցաբերում են գիտամեթոդական եւ տեխնիկական փոխադարձ օժանդակություն:

## **Հոդված 6**

1. Կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցիչների, այդ թվում մարդու եւ կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հարուցիչների եւ անասնաբուժասանիտարական առումով վտանգ ներկայացնող կենդանական ծագում ունեցող ապրանքների (արտադրանքի) ներկրումից ու տարածումից Մաքսային միության մաքսային տարածքը պաշտպանելու նպատակով լիազոր մարմինները, ըստ անհրաժեշտության և փոխադարձ համաձայնությամբ, կարող են կատարել հսկողության ենթակա Մաքսային միության մաքսային տարածք ներկրվող, ինչպես նաեւ Կողմերից մեկի պետության տարածքից մյուսի պետության տարածք տեղափոխվող ապրանքների (արտադրանքի) արտադրությունը, մշակումն ու (կամ) պահպանումը իրականացնող կազմակերպությունների եւ անձանց համատեղ ստուգումներ (տեսչական ստուգումներ):

*(2010 թվականի մայիսի 21-ի արձանագրության խմբագրությամբ)*

Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա իրերի համատեղ ստուգումը (տեսչական ստուգումը) իրականացվում է «Իրերի համատեղ ստուգումների իրականացման միասնական կարգի եւ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների (արտադրանքի) փորձանմուշների վերցման մասին» կանոնակարգին համապատասխան (այսուհետ՝ «Ստուգումների միասնական կարգի մասին» կանոնակարգ)

Համատեղ ստուգումների (տեսչական ստուգումների) անցկացման հետ կապված ֆինանսական ծախսերը իրականացվում են Կողմ պետությունների համապատասխան բյուջեներից, եթե յուրաքանչյուր առանձին դեպքում այլ կարգ չի սահմանվում:

## Հոդված 7

1. Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկը, անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին առաջադրվող Միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջները, «Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողության իրականացման միասնական կարգի մասին» Կանոնակարգը, ինչպես նաեւ «Իրերի համատեղ ստուգումների իրականացման միասնական կարգի եւ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների (արտադրանքի) փորձանմուշների վերցման մասին» Կանոնակարգը հաստատվում են հանձնաժողովի որոշմամբ:

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 607 որոշմամբ հաստատվում են Երրորդ երկրներից Մաքսային միության մաքսային տարածք ներկրվող՝ հսկողության ենթակա ապրանքների համար տրամադրվող Միասնական անասնաբուժական հավաստագրերի ձեւաչափերը:

2. Հանձնաժողովը՝ Կողմ պետությունների կողմից համապատասխան լիազորություններ ստանալու օրվանից սկսած՝ իրականացնում է Սույն հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերի, Կողմ պետությունների կենդանիների վտանգավոր եւ կարանտինային հիվանդությունների Համահավաք ցանկի վարումը, ինչպես նաեւ անասնաբուժական հավաստագրերի միասնական ձեւաչափերի հաստատումը:

*(2010 թվականի մայիսի 21-ի արձանագրության խմբագրությամբ)*

Սույն հոդվածի նպատակներից ելնելով՝ հանձնաժողովի կողմից փաստաթղթերի վարում ասելով հասկանում ենք սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված փաստաթղթերում սահմանված կարգով փոփոխությունների եւ լրացումների կատարումը, դրանց հետագա հաստատումը եւ Կողմերին այդ մասին ծանուցումը:

Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված փաստաթղթերում փոփոխությունների եւ լրացումների կատարման մասին առաջարկությունները հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվում սահմանված կարգով, Կողմերից ցանկացածի լիազորված մարմինների կողմից կատարված առաջարկություններով:

### **Հոդված 8**

Կողմերից յուրաքանչյուրը իրավասու է մշակել եւ ներկայացնել ժամանակավոր անասնաբուժական պահանջներ եւ միջոցներ Կողմ պետությունների եւ երրորդ երկրների տարածքներում կենդանահամաճարակային իրավիճակի վատթարացման մասին համապատասխան միջազգային կազմակերպություններից, Կողմ պետություններից, ինչպես նաեւ երրորդ երկրներից պաշտոնական տեղեկատվություն ստանալու դեպքում:

Վերոնշյալ տեղեկությունների առկայության, բայց անբավարար գիտական հիմնավորման դեպքում եթե այն չի կարող ժամանակին ներկայացվել, կողմերը կարող են ձեռնարկել անասնաբուժասանիտարական անհետաձգելի միջոցներ:

### **Հոդված 9**

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե վեճը չի կարգավորվում խորհրդակցությունների ու բանակցությունների անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո 6 ամսվա ընթացքում, ապա, վեճի կարգավորման այլ միջոցի վերաբերյալ Կողմերի միջեւ պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

## Հոդված 10

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

## Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Մաքսային միության պայմանագրահրավական հիմքի ձեւավորմանը միտված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» արձանագրությամբ:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2009 թվականի դեկտեմբերի 11-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի իր վավերացված օրինակը:

Բելառուսի  
Հանրապետության  
Կառավարության կողմից

Ղազախստանի  
Հանրապետության  
Կառավարության կողմից

Ռուսաստանի  
Դաշնության  
Կառավարության կողմից